

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՍԱՆ

Երկու քիւր միկ ծրարով

Տարեկան . . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.


ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Պ Ի Կ

Մանուցման սուղը
20 ամսիմ



Լ Ր Ա Կ Ի Ր

Ա Ջ Կ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՍԵՆ ԶՈՐԵՔԵՄԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԻ

Red. c'ion u journal

Iravunk

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ


ИРАВУНК

ВАРНА

Գրոշքիւնք եւս չեն
սրոշիր

ԱՍԵՐԻԿԱ

ԵՒ ԹՈՒՐԲԻԱ



Հետեւեալ չափերն յօդուածը որ
Միացեալ—Նահանգաց Թուրքիոյ հետ
ունեցած յարաբերութեանց կը վերա-
բերի, եւ որոյ հեղինակը երկար ա-
տեն Կ. Պօլսի քաղաքի մի համալսա-
մանիկոցի է, արժան կը համարենք
Արախի թարգմանութեան համեմատ
արտատպել:

Այսօր Թուրքիոյ և Միացեալ
Նահանգներու միջև սուր կեր-
պարանք և լուծման կարօտ հը-
րատապ հարցերը կարելի է չորս
գլխաւոր մասերու բաժնել:

Ա. Ամերիկեան դեսպանութեան
հաստատումը Թուրքիոյ մէջ:

Բ. Տնտեսական և առևտրական
խնդիրներ:

Գ. Թուրքիոյ վերաբերմունք
գէպի պետութեան մէջ գտնուող
Ամերիկեան կրօնական և բարե-
գործական հաստատութիւնները:

Դ. Թուրքիա վերադարձող
հայկերն թրքահայտակ ամերիկե-
ան քաղաքացիներու հարցը:

Ա. Թուրքիոյ մէջ դեսպանի
ստեղծման չունեցող կառավարու-
թեան մը ու է ներկայացու-
ցիչն իրաւասութիւն չունի ուղ-
ղակի յարաբերութեան մէջ մըտ-
նելու Սուլթանի հետ: Անոր
խնդրքը կը զրկուի Բ. Դրան,
ուր տարիներով կը ձգձգուի և
չատանգամ ալ չատ կարեւոր
խնդիրներ բոլորովին անպա-
տասխան կը մնան: Այսպիսի պա-
րագանքներուն կաշառակերութիւն
մեծ դեր կը խաղայ: Դեսպան
մը կրնայ անձամբ ներկայանալ
Սուլթանին և աղբեցութիւն գործ
դնել և իր պահանջներ ուղղակի
ներկայացնել, մինչ ներկայա-
ցուցիչ մը փառախոհներ ներկա-
յանալու բազմ ունի միայն այն
ատեն, երբ կը հրաւիրուի կամ
կը կանչուի: Թերեւս զանազան
միջոցներ գործ դնելով կարելի
է այս «կանչումը» ձեռք բերել
բայց երբ Սուլթան արգէն տես-
նել չի ուզեր, դժուար չէ Դրան

միջոցաւ երկար առեն ձգձգել:
Ամերիկա դեսպանութիւն չու-
նի Կ. Պօլսի մէջ, այլ միայն լիա-
զօր ներկայացուցիչ մը, որ միւս
պետութեանց դեսպաններու նը-
ման, ուզած առեն Սուլթանին
ներկայանալու իրաւունք չունի:
Կարգ մը փոքրիկ կառավարու-
թիւններ, որոնք ամբողջ միա-
սին առնելով, Ամերիկայի կիսուն
չափ չահեր չունին Թուրքիոյ
մէջ, աւելի դիւրութիւններ ու-
նին Կ. Պօլսի մէջ, քան Ամերի-
կա շնորհիւ իրենց դեսպաննե-
րու:

Ամերիկեան ներկայ լիազօր
ներկայացուցիչ Մ. Լէշման, 1903
ին իր տեղեկագրի մէջ մանրա-
մասնօրէն պատմած է թէ՛ ինչ-
պէս ամիսներով իրեն խաղցու-
ցած են Սուլթանին ունկնդրու-
թիւնը ձեռք բերելու համար:
Խարեւայութեանց և թրքական
սուտերու ամօթալի պատմու-
թիւն մըն է այդ: Քանիցս Ամե-
րիկեան ներկայացուցիչը հասած
է այն կէտին՝ որ յայտարարած
է իր դիւանագիտական յարաբե-
րութիւնը խզել և հեռանալ Կ.
Պօլսէն: Քանիցս սպառնացած է
անտեսել Բ. Դրան և գործ ունե-
նալ ուղղակի պալատի հետ:

Ամերիկեան ներկայացուցիչ
այս ձախող կացութիւնը բար-
ձրացնելու համար, միակ մի-
ջոցն համարուած է դեսպանու-
թիւն հաստատել Կ. Պօլսի մէջ:
Թուրքիա կառարկէ թէ՛ Օսման-
եան գանձը անկարող է դեսպա-
նութեան մը ծախքեր հոգալ
Ուաշինկթընի մէջ, բայց աս չը
պիտի կատարէ Մ. Նահանգներ
ուժգնօրէն իր պահանջը առաջ
քշելէ:

Սուլթանի հակառակութենէն
զատկան և պետութիւններ, ու-
րոնք զանազան նկատուածներով
չեն ուզեր «օրուան հսկան» ի-
րենց շարքին մէջ տեսնել, Գեր-
մանիան և Ռուսիան ամենէն ա-
ւելի հակառակ են, որովհետեւ
Ամերիկեան դեսպան մը իր ձախ-
նը պիտի միացնէ անոնց հետ՝
որոնք երկրին մէջ քաղաքական

և կրօնական ազատութիւն մըտ-
ցունել կը պահանջեն: Եւ մա-
նաւանդ, անոնց հակառակութիւ-
նը աւելի լարուած է, որովհետեւ
Ամերիկեան վաճառականութիւ-
նը օրէ օր կը ծաղկի Թուրքիոյ
մէջ:

Բ. Առևտրական խնդիրը նոր
է Թուրքիոյ և Միացեալ Նա-
հանգներու միջև: Քսան տարի
առաջ այդ հարցը գոյութիւն
չունէր: Ամերիկեան ներկայ վա-
ճառականութեան հսկայ քանակը
հասկնալու համար կարգալու է
հիշատական տեղեկագրերը:
Երկաթուղիներու համար ահա-
գին քանակութեամբ պատրաստի
երկաթ և կամուրջներ կը շըր-
կուին Թուրքիա:

Ամերիկացիներ ահագին կալ-
ուածներ ունին Թուրքիոյ մէջ:
Անցեալին օտարական մը սեփա-
կանութիւն ունենալու իրաւուն-
քը չունէր, եթե անոնեան թու-
ականներուն Ամերիկացիներ յա-
ջողեցան դաշնագրութեամբ մը
Թուրքիա ապրողի մը անունով
կալուածներ գնելու իրաւունքը
ստանալ: Բայց թրքական կա-
ռավարութիւնը խստիւ հակառա-
կեցաւ որ Ամերիկեան ընկերու-
թիւններ կալուածներ ունենա-
լին, ներկայացուցիչներ կար-
գելով հոն և սեփականութեան
իրաւունքը իրենց վերապահե-
լով:

Ներկայ օրէնքներով կալուած-
ներու փոխանցման դժուարու-
թիւնն անկարելիութեան հասած
է: Այսպիսով Ամերիկեան բարե-
գործական հաստատութիւնները
կաշկանդուած վիճակի մը մէջ
կը գտնուին: Իւրաքանչիւր ան-
գամ երբ Ամերիկեան միսիոնար
մը կը փոխագրուի կամ կը մեկ-
նի երկրէն, ահագին դժուարու-
թիւններ և ծախքեր տեղի կու-
նեն ան կալուածներն ուրոյ մի-
սիոնարի մը անուան փոխանցե-
լու առթիւ: Երբ կալուածատէր
ներկայացնող միսիոնար մը կը
մեռնի, անսահման դժուարու-

թիւններ կը ծագին, մանաւանդ
երբ անոր ժառանգորդներն աչ-
խարհիս չորս կողմ ցրուած կըլ-
լան:

Երբ Ամերիկեան կարենայ ձեռք
բերել այն իրաւունքներն, ինչ
որ Ֆրանսա և միւս կառավարու-
թիւններն ունին, այն առեն ըն-
կերութիւն մը իրաւունք կունե-
նենայ կալուած ունենալու Թուր-
քիոյ մէջ և իր ուզած մարդը
գործակալ կարգելու: և ահա՛ ա-
սով միայն բոլոր դժուարութիւն-
ները կը լուծուին: Եթէ ասանկ
մնայ, Թուրքիա ներկայ օրէնքով
իրաւունք ունի Ամերիկեան Գո-
լէճի մը կալուածներն գրաւելու
եթէ կալուածատէր ներկայացող
միսիոնար մեռնի և ժառանգորդ
մը չլիցի: Ասանկ ալ Քրիստո-
նէութեան համար տրուած դրա-
մը կրնայ մահմետական նպա-
տակներու ծառայել:

Ֆրանսա ամենէն աւելի իրա-
ւունքներ կը վայելէ Թուրքիոյ
մէջ: Ընկերութեան մը գանձա-
պահ կը նկատուի կալուածատէր
և Ֆրանսական կալուածներ՝ գաղ-
թավայրի մը նման՝ ունին ի-
րենց տուանձին սուրհանդակ,
նամակատուի և Ֆրանսական դը-
րօշակ շարունակ կը ծածանի ա-
նոնց վրայ:

Ամերիկա այս խնդիրն առա-
ջին անգամ ներկայացուց Բ. Դը-
րան 1902, Սեպտ. 12 ին, որ ա-
տեն մերժուեցաւ և մինչև հիմա
ալ խաբուսիկ միջոցներով կը
ձգձգուի:

(Շարունակելի)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ինչ որ մեր Յէրդ. թուով յայտ-
նած էինք Ռուսիոյ համար, երթալով
իրականանալու վրայ է:

Կ'երեւի որ Ռուսիոյ մէջ՝ թէ՛ Ձա-
րական տարրը եւ թէ՛ ժողովուրդը
աւելի անյաղ ցանկութեան մ'ունին
միշտ խռովայոյզ վիճակի մէջ տես-
նել իրենց երկրը ու այնպէս ապ-
րիլ, քան թէ հանդարտութեան մէջ
եւ խաղաղ կեանք մը վարել:

Անսահման ատելութիւն մը ու խաղաղութիւն մը տիրած է գործաւոր ժողովուրդի սրտին մէջ, եւ այս պատճառաւ ամեն օր ուրաքա՛ղութիւններն ու սպանութիւններն զօրականաց դէմ անպակաս են։ Միւս կողմէ ինչպէս կառավարութիւնը յայնպէս եւ ոստիկանութիւնը իրենց ճիւղաւորներն սովորութիւններէն մազի չափ հրաժարելու արամադրութիւն զոյց չեն տար, ուստի, ու եւ է փոքր շարժում կամ ցոյց մը կը զսպեն կատաղի վայրագութեամբ եւ արիւնհեղութեամբ։

Այսպէս ահա Բեթերպուրկէ հասած հեռագիր մը կրմացնէ թէ՛ Մայիս 1 ի օրը Սիւպիրսքի, Վոլոկտա, Մուրոմ եւ Չարիճին քաղաքներուն մէջ՝ զինուորականաց եւ ոստիկանութեանց ցոյցաբար ժողովրդեան վրայ բռնեցուցած զսպումները, չափէ դուրս ստակարի եւ արիւնհեղ եղած են։

Դալով Տուժոյին՝ որուն գործի սկսելը հազիւ 20 օր է, եւ արդէն մեծամեծ ընդդիմութիւններ եւ զբուռարութիւններ սկսած է ունենալ թէ՛ Չարին, թէ՛ Կորմիլինի նախարարութեան եւ թէ՛ առհասարակ ամեն հին ու նոր մարտականներուն կողմէ։

Առաջին դժուարութեան որուն հանդիպեցաւ Տուժան, այն եղաւ որ Չարը չուզեց ընդունիլ իր գահաճառին դէմ Տուժային պատասխանական ուղերձը յատուկ պատգամաւորութեան մը միջոցաւ, այլ նախարարական Կորմիլինի գրեւ տուաւ Տուժային նախագահին, որ նա ինքը միայնակ տանի յանձնէ այն ուղերձը Չարին։ Եւ հազիւ թէ Կորմիլինի այս Չարական հրամանը կատարած էր, եւ այս անսովոր եղանակը Տուժային մայիս 8 ի նիստին մէջ տաք վիճաբանութեան մը տեղի առաւ էր, որ նախարարական Կորմիլինի երկրորդ պաշտօնագրով մը խորհրդարանին նախագահին կողմէ արարէր Չարին մէկ նոր հրամանը։

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

Կարիւր Աստուծոյ ...

(Շար. նախորդ թիւէն)

Ը.

— Ինչո՞ւ այդպէս կրնես. Խաթուն ջուրի՛կս, աւելի աղէկ չըլլա՞ր որ Ասլան ջուր յիշատակովդ ապրի։ Անիկա ի՞նչ պիտի գիտնայ ջուր ամուսնանալը։ Արդե՞ք հիմակուսն ամուսնանէ՞ր կը վախնաս։

— Ձեմ վախնար, ո՛հ, ամենեւին չեմ վախնար ... Բայց չեմ ուզեր որ սիրելի Ասլան կենդանի մեռածի մը յիշատակով ապրի։ Ա՛խ, ուխտած էի հաւատարիմ մնալ ու գերեզմանէն անդին ալ միասնել ըլլալ։ Ես վատ մը եմ, Կարիւր Ասլա՛ն, որովհետեւ չը պահեցի խոստումս ու այնքան երգումներուս նուիրական սրբութիւնն ուրիշ տակ առի։ Ի՞նչ ընեմ ... Բան չեմ ըսեր ... սա մօրս վիզը՝ տակը մնայ ...

— Մի՛ անխիղճ մայրդ, խաթուն ջուրի՛կս, անիկա եթէ գիտնար որ Ասլան մեռած չէ՛ր, պատճառ կըլլա՞ր որ դուն ամուսնանայիր։ Ի հարկէ ո՛չ։

— Մանկամարդ կիներ սրբեց աշխարհ արցունքները. յետոյ հաստատական ձայնով մը վճռեց։

— Ո՛չ ... Ի՞նչ որ ալ ըլլայ, դարձեալ չեմ կրնար ձեռքս դպցունել այդ

որոյ համեմատ Տուժան իր ուղերձը պէտք էր խրկել արքունական նախարարին միջոցաւ։

Նշանակութեան արժանի է Չարին այս խնդրոյ մէջ ունեցած վարժու՛նը Տուժայի հանդէպ, ահա յայտնի կերպիւր որ Չարը իւր նախկին միահեծան իշխանութիւնէն մազի չափ զոհողութիւն ընելու կամք չունի, եւ ուզած է ստորագրել Տուժան, անոր ուղերձը արքունական նախարարին միջոցաւ ուղելով ընդունիլ։

Ուրեմն Չարին իր ազգին տուածը չէ թէ սահմանադրական վարչութիւն մէ, այլ ծիծաղաշարժ կատակախաղութիւն մը, վստօքի նախ՝ ամեն սահմանադրական երկիրներու մէջ գահաճառերու պատասխանները ո՛ղղակի երեսփոխանական պատուիրակութեանց կողմանէ կը ներկայացուին վեհապետաց, եւ երկրորդ՝ նախարարութիւնները ստորագրեալ են երեսփոխանական ժողովոյ, եւ ոչ ասոնք անոնց։

Մեր ընթերցողաց յայտնի է որ Տուժան իր առաջին խորհրդակցութեանց Իւլիս Ըրաւ, մէկ մը քանտարկելոյց ընդհանուր ներման շնորհով, մէկ մալ մահուան պատժոյ քննուած, եւ Տուժայի ուղերձին պարտականութիւնը կը կայանայ գլխաւորապէս այս երկու կէտերու վրայ։

Մեզ դժուար կերպիւր որ կայսրը Տուժայի այս երկու առաջարկները ընդունի, գուցէ մասնաւոր ներումներ չնորհէ, բայց ընդհանուր ներում եւ մահուան պատժոյ բարձրում, ո՛չ, որովհետեւ ասոնց ո՛չ թէ միայն Չարը, այլ նաեւ նախարարութիւնը, պետական խորհուրդը եւ ամբողջ յետադիմական անձինք հակառակ են։

Այս մասին ահա ինչ կըսէ Բեթերպուրկէ մայիս 7 ին քաջուած հեռագիր մը.

«Բարձրագոյն կառավարական շրջանակներու մէջ ձեռք առնուած

ընթացքը քաղաքական ընդհանուր ներմանց մասին շատ հակառակական է, եւ հաստատապէս կերպիւր թէ այդ ներումը պիտի մերժուի։

«Մեծածէ Ծիծաղիւր» թերթը ամեն օր յետախաղաց կուսակցութեանց եւ պահպանողականաց կողմանէ կայսեր քաջուած հեռագիրներ կը հրատարակէ, որոնք կաղերսեն կայսեր որ չը շնորհէ ո՛չ ներումն, եւ ո՛չ բարձրումն մահուան պատժոյ, ըսելով որ ասոնք յեղափոխական վտանգը ստաւել կը շատցնեն»։

Ինչպէս կերպիւր, այս հեռագիրներուն տուած տեղեկութիւնները Տուժայի ապագային համար վստահացուցիչ չեն։

Բեթերպուրկէն եւս 10 մայիսին քաջուած հեռագիր մը կըսէ.

«Նախարարաց ժողովոյ նախագահը Կորմիլինի այսօր Չարին ներկայացուց կառավարութեան պատրաստած յայտագիրը որ Տուժայի մէջ պիտի կարդացուի իբր պատասխան անոր ուղերձին»։

Անշուշտ այս կարդացուելիք յայտագրէն պիտի հոսկնաք թէ Չարը ինչ նպատակներու պիտի ծառայէ։

Վերջին պահուն Բեթերպուրկէ հասած հեռագիր մալ մայիս 12 թուականաւ կըսէ թէ «Սահմանադրական-Ռաւիալարական կուսակցութիւնը այսօր Տուժային օրինաց ծրագիր մը պիտի ներկայացնէ խղճի ազատութեան վերաբերեալ սահմանց վրայ»։

«Կրօնքի պատճառաւ ո՛չ ոք չէ կա-

րելի դատի ենթարկել։

«Ռուսիոյ մէջ ամեն կրօն միեւնոյն ազատութիւնը պիտի վայելեն։

«Ո՛չ ոքի ստիպում չպիտի ըլլայ սահմանաւ կրօնքն ընդունելու եւ պաշտօնելուն համար։

«Ամեն ոք որ 17 տարին լրացուցեր է, ունի իրաւունք իր կրօնքը փոխելու»։

Ինչպէս կը տեսնուի, Տուժայի ծրագիրները գէշ չեն, ինչ՞ թէ յաջողութիւն գտնային ... Բայց ...

* * *

Աժ.Ա.ՆԱ Ռեթիկով կըսէ թէ եգիպտական սահմանադրւոյ խնդրոյ առթիւ անգղիական պահանջմունքն ընդունող Բ. Դրան վերջին ծանուցագիրը, Պոլսոյ դիւանական շրջանակաց մէջ կը նկատեն իբր Բ. Դրան կողմէ առաջին պաշտօնական ճանաչումն եգիպտոսի վրայ Անգղիոյ ձեռնարկութեան իրաւանց։

Կըսուի թէ Սուլթանին երկրորդ քարտուղարը Իզզեթ փաշան, եգիպտական խնդրը ծնած ատեն Սուլթանին խրատ տուած ըլլալով դէս կենալ անգղիոյ, այժմ երեսէ ինկած դիրքի մը մէջ է։

Էլ-Ռաֆէի կողմը եղած սահմանաքարերը վերջեւ տուող թուրք հրամանատարը, եւ այն սպան՝ որ անգղիական Միլերվալ յաճանաւին մէկ սպային դէմ լրբութեամբ վարուել էր, երկուքն ալ խստիւ պատժուել են։

Փրանք Ֆորթի Կիլեռալանձիկի լրագրին Լոնտոնայէն քաջուած հեռագիր մը կրմացնէ որ՝ թուրքայի հետ տեղի ունեցած դժուարութեանց հետեւանօք, անգղիական եւ եգիպտական կառավարութիւնք համաձայնութեամբ որոշեցին, որ Սուէզի ջրանցքին բոլոր երկայնութեամբը նոր եւ զօրաւոր պատնէշներ շինուին։

Թուրքիա եւ եգիպտոս իրենց քոմիսէրները անուանեցին որ պաշտօն պիտի ունենան երկու տերութեանց

Ի Լ Ա Ն

Գրեալ պիտի Երեւոյն ընդ ժողովուրդէն կազմեալ թիւը քան զըստ զոր Գալ յօմէ-
րօ էրմէնիճէ նէշրօլընաճագ տըր-
պու խոստատա էրմէնիճէ պիւ-
մէյէն ապօնէլէրիմիլին ափվընը
իսթիւրհամ իտէրիզ :

Ա Ձ Դ

Տօրթ. Թագաւորեան ընտանիքը
պատիւ ունի ազգարարել Սօֆիա-
յի մէջ իրեն ծանօթ ընտանիք-
ներուն թէ՛ հիւր կրնայ ընդու-
նիլ այսուհետեւ մի միայն հինգ-
շաբթի օրերը կէսօրէն վերջ ժա-
մը 3—5 :

Լ Ո Ւ Ր Ե Ր

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Կ. Պօլիս 14 Մայիս

Պատրայէն Հիւպատոսի մը կող-
մէ քաջուած հեռագիր մը կըսէ
թէ նէճօֆի և Քէրպելայի մէջ
եղող օտար հպատակները Հիւպա-
տոսաց պաշտպանութիւնը կը
խնդրեն, վասն զի արաբական
ցեղերը ապստամբած ըլլալով
կառավարութեան դէմ տեղական
իշխանութիւնք անկարող են զի-
րենք պաշտպանելու բոլոր ազ-
գեցութիւններն կորսնցուցած ըլ-
լալով :

Թուրք լրագրաց ըսածին նա-
յելով Պաղտատի Վալին Քէրպել-
այ գաղեր է իրաց ներկայ վի-
ճակին դարման տանելու մտք :

Կ. Պօլիս 12 Մայիս

Եւրոպական մեծ դեսպանները
Բ. Դրան հաւաքական նօթա մը
տալով ծանուցին, որ Օսմանեան
կառավարութեան խնդրած մաք-
սային յաւելումական տուրքն
ընդունելու պատրաստ են, այն
պայմանաւ սակայն, որ անկէ գո-
յանալիք դուժարները Մակե-
դոնական գանձային պիտոյից
յատկացուին ամբողջապէս, եւ
բաց աստի՛ Մաքսային կանո-
նադրութիւնը, Հանքային օրէն-
քը եւ քարիւղի շտեմարանաւո-
րումի գործը ամենայն անկողմ-
նակալութեամբ եւ ճշգրութեամբ
միշտ գործադրուին : Ուրիշ պայ-
ման մը ևս դրած են, որ ապա-
հովազրական անանուն ընկերու-
թեանց համար Բ. Դրան հրա-
տարակած նոր օրէնքը պէտք է
վերաքննուի Տերութեանց հա-
ւանութեան տեսակետով :

Վիեննա 13 Մայիս

Քարատաղի Սահմանաց վրայ
մէկ կողմէ քրիստոնէից և մահ-
մետականաց, և միւս կողմէ թուրք
զօրաց մէջ կռիւները կը շարու-
նակեն :

Շուրջ 400 Քարատաղցիք սահ-
մանը անցան քրիստոնէից օգ-
նութեան հասնելու համար, և
կըսուի թր Քարատաղի կառա-
վարութիւնը Քօլաչինի և Սն-
տրիէվիչի զօրագունները շարժ-
ման մէջ գրեթէ Բ. Դուռը ևս
իւր կողմանէ հրամայած է որ
Սքիւպի վիլայէթին Բ. կարգի
րէտիֆ զօրքերը պատրաստուին
ճամբայ ելնելու :

Բ Ե Թ Ե Ր Ս Ի Ա

Բեթերպուրկ, 14 մայիս
Կառավարութեան պաշտոնա-
կան լրագիրը կը յայտարարէ թէ՛
1905 ի դեկտեմբերէն մինչեւ
ներկայ ամսոյ 3 ը աքսորուած
մարդոց թիւն է 6825, բանտար-
կեալներունը 2627, իսկ քաղա-
քական յանցանք ձերբակալու-
ածներն են 3351 հոգի :

Բեթերպուրկ, 14 մայիս

Ոստիկանութիւնը այս միջոցիս
զբաղած է քաղաքական խնդրոց
համար բանտարկեալները երկու
դասակարգի բաժնելու ազատելիք
և ոչ ազատելիք :

Ընդհանրապէս իշխանութեանց
գործելու եղանակը և ձեռք ա-
ռած միջոցները այնպէս գու-
շակել կուտան, որ կառավարու-
թիւնը վերստին կը դիմէ յետա-
դիմական քաղաքականութեան
մը :

Յետագիմական կուսակցու-
թեանց հետեղքը կառավարու-
թեան այս ընթացքին կօգնեն
իրենց կազմած միթինկներով,
ժողովուրդը համոզելով և ահ
ու երկիւղ տալով :

Բեթերպուրկի լաւատեղեակ
շրջանակներու մէջ կը կարծուի
թէ այս քաղաքականութեան վե-
րափոփոխումը առաջ եկած է
Թրէբօֆին և Բօպիէտօնօճէվին
արքունեաց վրայ վերստին սաա-
ցած ազդեցութիւններէն, բայց
տակաւին հաստատուած չէ այս
բանը :

Ի Ո Ւ Մ Ա Ն Ի Ա

Կարոլոս առաջնոյ քառասնա-
մեայ գահակալութեան տարե-
դարձը խիստ շքեղ հանդէսներով
կատարուեցաւ թէ Պուգրէշ մայ-
րաքաղաքի և թէ բոլոր Ռումա-
նիոյ մեծ քաղաքաց մէջ :

Այս յոբելեանի յիշատակը յա-
ւերժացնելու համար տէրութեան
երկու բարձր խորհրդարանները
քուէարկեցին ազգային նոր
պատուանշանի մը հաստատու-
թիւնը :

Այս պատուանշանը պիտի կոչ-
ուի «Կարգ Կարոլոսի Առաջնոյ»,
պիտի տրուի միայն մեծամեծ
անձանց և ընդ ամենը 80 ան-
դամ պիտի ունենայ :

Յիշեալ պատուանշանին առա-
ջին կողմը պիտի ըլլայ Սպանիոյ
Ալֆօնս թագաւորը, որոյ ամուս-
նութեանը առթիւ քիչ օրէն
պատուանշանին բարձրագոյն
կարգն եղող մանեակը պիտի
մատուցուի ձեռամբ արտաքին
գործոց նախարար Լաֆօլարիի,
որ Ռումանիոյ թագաւորի կող-
մանէ իբր ներկայացուցիչ հար-
սանեկան հանդէսին ներկայ պի-
տի ըլլայ ի Մատրիա :

Հ Ո Ւ Ե Ր Ս Ի Ա

Պուտաբէշը 9 Մայիս

Ֆրանց-Եօզէֆ կայսր թագա-
ւորը Հունգարիա գնաց բանալու
համար նորընտիր Բաւլամէնտը,
որոյ անդամներն ընդունեց պու-
տայի դղեակին մէջ :

Իւր Գահաճառին մէջ բար-
լամէնտին նորընտիր անդամոց
բարի գալուստ մաղթելէ յետոյ
հետեւեալ կերպիւ արտայայտեց
իր խօսքերը :

«Մեր հայրական զգացմամբ ո-
գեւորեալ սրտին համար շատ ցա-
ւալի է յիշել վերջերս պատահած
եղելութիւնները, որոնք երկրին
սահմանադրական կենաց սովո-
րական ընթացքը խռովեցին :
Մենք մեր շնորհակալութիւնն-
րը կուղղենք Աստուածային նա-
խախնամութեան որ պատահած
փաստակար անհասկացողութիւն-
ները վերջացան :

«Երկրին ազատօրէն արտայայ-
տած կամաց համաձայն գտնուե-
լով շերմապէս կը բաղձանք և
հաստատապէս կը յուսանք որ
այսուհետեւ պիտի տեսնենք ամ-
բազլ օրէնսդրական գործիչնե-
րուն միմեանց հետ համաձայ-
նութիւնը, և անչիօթ ու սահ-
մանադրութեան համաձայն գոր-
ծողութիւնը » :

Ճ Ա Ր Օ Ն

Ճարօնի կայսրը իր Լօնտրայի
դեսպանը դերակումս Հայաչին
արտաքին գործոց նախարար
անուանեց :

Դերակումս Հայաչի շատ տարօ-
րինակ ասպարէզ մ'ունեցաւ իր
պատանեկութեան ատեն երբ
հազիւ 18 տարեկան էր, տիրող
իշխանութեան դէմ կատաղի հա-
կառակորդ մը եղաւ, և 1868 ին-
քաղաքային պատերազմին ատեն
ապստամբութեան մասնակցելով
էնօմթօ ծովագետին ներքեւ ա-
պրտամբող նաւերէն միոյն հրա-
մանատար եղաւ : Երբ խաղաղու-
թիւնը տիրեց Մանչուհիթօ կայս-
րը իրեն ներողութիւն շնորհեց,
և երեք տարի յետոյ այս նախ-
կին ապստամբը Եւրոպա գնաց
իշխան Իվաքուրա դեսպանին
հետ իբր անոր քարտուղար՝ Երբ

1873 ին վերադարձաւ Թօքիօ
մտաւ պաշտօնով արտաքին գոր-
ծոց նախարարութեան մէջ : Յե-
տոյ նոյն նախարարութեան պե-
տին օգնականն եղաւ և այս
պաշտօնին մէջ մնաց 5 տարի :
1896 է 1898 Բէքիւնի դեսպան
եղաւ, 1899 ին Բեդերպուրկի
դեսպան և վերջապէս 1890 ին
Լօնտրայի դեսպան ուր շատ ճար-
պիկութեամբ վարեց իւր պաշ-
տօնը 6 տարիէ ի վեր և անգ-
ղիական կառավարութեան կող-
մանէ յարգ ու պատիւ ստացաւ
միտ :

Դերակումս Հայաչի Ճարօնի ա-
մենայնողակ քաղաքագէտներէն
մին է, և անոր կը պարտի Ճա-
րօն իր զինակցութեանց կնքու-
մը Անգլիոյ հետ :

Ն Ե Ր Ի Ն

Վառնայ՝ որոյ նորաչէն նաւա-
հանգիստին պաշտօնական բացու-
մը տեղի պիտի ունենայ վաղը
հինգշաբթի, երկու օրէ ի վեր
արտակարգ ոգեւորութիւն մը ա-
ռած է եկող պուլկար և օտարազ-
գի հանդիսատեսներու բազմու-
թենէն : Երկու օրէ ի վեր մեծ
և փոքր պողոտայները եղող տու-
ներն ու խանութները դրօշակ
ներով և նաւահանգստին քարա-
փը խիստ շքեղապէս զարդարու-
ած են :

Երէկ առաւօտէ ի վեր մինչեւ
հիմայ հետզհետէ Պօլսոյ դեսպա-
նական պահականաւերը կը մրտ-
նեն նաւահանգիստ, և թնդա-
նօթներու որոտումը չը դադրի :
Հանդէսը շատ փայլուն պիտի
ըլլայ վաղը ինչպէս կերէի պատ-
րաստութիւններէն :

Ա Ձ Դ

Տօրթ. Թորոսեան տեղափոխուելով
իւր բնակարանը Ուլիցա Տրօկման,
թիւ 58, կրկական Տեսչի պաշտօնա-
տան վարի յարկը, պատիւ ունի ծա-
նուցանել յարգոյ հասարակութեան թէ
ինչպէս առաջ նոյնպէս եւ միշտ կըն-
դունի ամեն տեսակ հիւանդներ առա-
ւօտները ժամը 9-էն մինչեւ 11 : Իսկ
կէսօրէ վերջ 2-էն մինչեւ 4 ը :

Այս առթիւ Տօրթօրը կը խնդրէ նա-
եւ ամեն անոնց՝ որոնք իբր աղքատ
ձրիաբար դարմանուիլ կը փափաքին,
հաճին այցելել իրեն միմիայն կիրա-
կի օրերը կէսօրէն ետքը :

Լ Ո Ւ Ծ Ի Ն Տ Ա Վ

ՊՈՒԼԿԱՐ ԱՊՍԱՄԲԱՎԱՆ ԿԵԱՆՔԷ

Այս շատ գեղեցիկ հատոր մըն է
թէ պարունակութեամբ եւ թէ կաղ-
մով : Գինն է 5 ֆր. դիմել « Զայն
Հայրենեաց » խմբագրութեան :

Одговорникъ А. Курбетянъ

леп пинат а Д. Тодоровъ и С-ие—Варна 3